ԼԴ/1385/02/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2 հուլիսի 2021 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Հրաչիկ Ղամբարյանի ընդդեմ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի, Արտակ Ղազարյանի, երրորդ անձինք՝ ՀՀ Վանաձոր նոտարական տարածքի նոտար Արուսիկ Ազարյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանման՝ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջների մասին թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 20-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

1. Հրաչիկ Ղամբարյանը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 2019 թվականի ապրիլի 29-ին հայցադիմում է ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի, Արտակ Ղազարյանի, երրորդ անձինք՝ ՀՀ Վանաձոր նոտարական տարածքի նոտար Արուսիկ Ազարյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանման՝ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջների մասին:

2. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի մայիսի 14-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության:

4. Հայցվորի ներկայացուցչի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշմամբ բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի որոշումը վերացվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ գործի վարույթը շարունակելու համար:

5. Պատասխանողների ներկայացուցչի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի ընդունումը ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ մերժվել է:

6. Առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա. Մկոյան) 2021 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

7. Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի մարտի 26-ին որոշում է կայացրել գործը ՀՀ սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) «Դատալեքս» տեղեկատվական դատական համակարգից ստացված տեղեկությամբ պարզվել է, որ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ն Սնանկության դատարանի 2020 թվականի հունիսի 16-ի վճռով ճանաչվել է սնանկ:*

Նկատի ունենալով, որ սույն գործով վեճը վերաբերում է սնանկ ճանաչված «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի գույքի կազմում ներառված գույքային իրավունքներին և այն, որ սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման միջոցների առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործեր, ուստի Դատարանը փաստում է, որ քաղաքացիական գործը ենթակա է քննության Սնանկության դատարանում»:

8. Թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործը 2021 թվականի ապրիլի 9-ին մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Ա. Աթաբեկյանին:

9. Մանկության դատարանը 2021 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) ըստ ներկայացված հայցապահանջի փաստարկների՝ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի (վաճառող) և սույն գործով պատասխանող Արտակ Ղազարյանի (վաճառող) միջև դեռևս 2008 թվականի օգոստոսի 22-ին կնքվել է «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, իսկ պայմանագրի առարկա հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է գնորդ Արտակ Ղազարյանի սեփականության իրավունքը, և նկատի ունենալով, որ նշված պայմանագիրը հակասում է օրենքի պահանջներին՝ հայցվոր Հրաչիկ Ղամբարյանը դատարանին խնդրել է գործարքը ճանաչել անվավեր: Փաստորեն, սույն քաղաքացիական գործով վեճի առարկա հանդիսացող գույքը չի հանդիսանում է թիվ ՄԴ/0400/04/20 մանկության գործով պարտապան «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ին պատկանող գույքի կազմում ներառված գույք, ուստի գտնում եմ, որ հայցի փաստական հիմքում նշված՝ պայմանագրի առարկա հանդիսացող գույքը չի հանդիսանում պարտապան «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի գույքի կազմում ներառված գույք»:*

10. Թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի ապրիլի 26-ին:

11. 2021 թվականի մայիսի 3-ին Վճռաբեկ դատարանի նախագահը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու, ի թիվս այլնի, նաև թիվ ԼԴ/1385/02/19 գործի ենթակայության վերաբերյալ վեճի լուծման կապակցությամբ կիրառման ենթակա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի, «Մանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներին համապատասխանության հարցը:

12. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի հունիսի 25-ի թիվ ՍԴԱՈ-123 որոշմամբ Վճռաբեկ դատարանի նախագահի դիմումի հիման վրա գործի քննությունը մերժվել է:

13. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի հունիսի 30-ին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *առկա են արդյո՞ք «Մանկության մասին» ՀՀ օրենքով ամրագրված՝*

գործի ենթակայության նախապայմանները, թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործը Մնանկության դատարանի կողմից քննության առնելու համար:

15. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

16. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...): Սնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր)»:*

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան»:*

17. Սույն որոշման 15-16 կետերում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն նախատեսված է

«Սնանկության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացնում է Սնանկության դատարանը: Սնանկության դատարանը միաժամանակ իրականացնում է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

18. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան՝ հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, **պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված,** ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի,

2) քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա Սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

19. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- 2008 թվականի օգոստոսի 18-ին «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի և Արտակ Ղազարյանի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի թիվ 22024962-0590-0202 պայմանագիրը, որով «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ն վաճառել է իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Թումանյանի փողոցի թիվ 8զ հասցեում գտնվող խանութը՝ 326,8 քմ մակերեսով, և 0,0181 հա հողամասը:

- Հրաչիկ Ղամբարյանը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի, Արտակ Ղազարյանի, երրորդ անձինք՝ ՀՀ Վանաձոր նոտարական տարածքի նոտար Արուսիկ Ազարյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանման՝ վերոնշյալ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջների մասին:

- Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի մարտի 26-ին որոշում է կայացրել գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին: Դատարանը փաստել է, որ քաղաքացիական գործը ենթակա է քննության Սնանկության դատարանում՝ նկատի ունենալով, որ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ն Սնանկության դատարանի՝ 2020 թվականի հունիսի 16-ի վճռով ճանաչվել է սնանկ, և սույն գործով վեճը վերաբերում է սնանկ ճանաչված «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի գույքի կազմում ներառված գույքային իրավունքներին:

- Սնանկության դատարանը թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործի ենթակայության վերաբերյալ իր անհամաձայնությունը հիմնավորել է՝ նշելով, որ քաղաքացիական գործով վեճի առարկա հանդիսացող գույքը չի հանդիսանում թիվ ՍՆԴ/0400/04/20 սնանկության գործով պարտապան «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ին պատկանող գույքի կազմում ներառված գույք:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-18-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է նախ փաստել, որ պայմանագիրը, որի առնչությամբ ծագել է սույն քաղաքացիական գործով իրավական վեճը, կնքվել է «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի սնանկության գործով պարտապանի՝ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի և Արտակ Ղազարյանի միջև: Սույն գործում բացակայում են տվյալներն այն մասին, որ Արտակ Ղազարյանը թիվ ՍՆԴ/0400/04/20 սնանկության գործով հանդիսանում է պարտատեր: Մինչդեռ սույն քաղաքացիական գործը Սնանկության դատարանին հանձնելու առաջին նախապայմանը վիճարկվող պայմանագրի՝ սնանկության գործով պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված լինելու հանգամանքն է, որը տվյալ պարագայում առկա չէ: Հետևաբար բացակայում է թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործը Սնանկության դատարանին հանձնելու անհրաժեշտ նախապայմանը:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործը ենթակա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի Հրաչիկ Ղամբարյանի ընդդեմ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի, Արտակ Ղազարյանի, երրորդ անձինք՝ ՀՀ Վանաձոր նոտարական տարածքի նոտար Արուսիկ Ազարյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանման՝ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջների մասին, ենթակա է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ